

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1) Գամալեանց Ա. Գ. ԸՕ ԱՓՕ ԾՆ ԽՈԱԶԱՆ. Բ. ապ. Քիֆլիս 1906 էջ 40.

Մեր ժողովրդական գրականութիւնը վերջերս կարծես սառուցման կէտին է հասել. քիչ թէ շատ յայտնի ժողովրդական գրողներէրից ոմանք ի Տէր հանգեան (Արարատեան, Ագապեան), ոմանք դադարեցին գրելուց (Աղայեան և այլն) և ասպարէզը մնաց մեծ մասամբ անտաղանդ բանաստեղծներին և հայերէն չիմացող թարգմանիչներին, որոնք սունկի պէս բուսնում և շուտով անյայտանում են: Այս երևոյթը շատ ցաւալի է մեր նորարողըզ գրականութեան համար. բուն ժողովրդի կեանքի ուսումնասիրութիւնը և նրա մտաւոր աշխարհի հոգեբանութեան ըմբռնումը պէտք է կազմէ մեր աշխարհիկ գրականութեան էական սաղմը: Այս կենդանի աղբիւրից պէտք է հոսեն վճիտ ջրերը, որ թարմացնեն և կենսատու ոյժ տան աւելի քանքարաւոր հայ գրողների ինքնուրոյն արտադրութիւններին, հոգի և զգացմունք ներշնչեն դեռափթիթ հայ տաղանդներին:

Գամալեանց Ս., որ մեր շնորհալի ժողովրդական գրողներից մէկն է, կարծես նոյնպէս դադարել է նոր բան արտադրելուց-ցանկալի է, որ այս դադարը ժամանակաւոր լինի-և այժմ զբաղուած է իւր նախկին գրուածների երկրորդ հրատարակութեամբ: Գալօ Ափօ և Խաչանը, որ նոյնպէս լոյս են տեսել երկրորդ տպագրութեամբ, իրենց «բովանդակութեամբ» ճշտիւ համապատասխանում են հայ ժողովրդի այժմեան տրամադրութեանը և կրում են մինչեւ մահ-գերեզման մարդ պէտք է հրացան սիրի նշանաբանը:

«Գալօ Ափօ» ի նիւթը վերցրած է «Բէհբութովի կուռի» ժամանակից ուսուտաճկական սահմանագլխի զիւղերի հայ գիւղացիների կեանքից. քաջասիրտ «Ափօն» կամ «Իալի Գեալստը» միշտ խրատում է «դաշոյն կապեցէք, հրացան բանացնել սովորեցէք», «թուրքին պէտք է ծեծես, որ բարեկամանայ», «մեծունանց խօսք է, թէ սոխի դէմ սխտոր պէտք է ծեծել: Այս օրից հաւաքուեցէք երիտասարդներդ միատեղ և վրայ տուէք թուրք օբաներին: Իմ խորհուրդն այս է, թուրքերի աչքը, պէտք է ծեծով, թակով վախեցնել»: Երբ վախճանուում է 93 տարեկան հերոսը լողաչնողները շորահան անելիս նկատել էին հագուտի վրայ կոշտ բաներ. կարծել էին թէ արծաթ փողեր են արխաւուղի մէջից կարած: Իրա համար արխաւուղը ծա-

ժուկ փախցրել էին: Բայց շորի կարերը քանդելով արծաթ փողի տեղ գտել էին հրացանի լցրած փամփուշտներ, որ Ափօն պահուում էր անակնկալ վտանգների ժամանակ գործածելու համար: Մեր առաջ բերած հատուածները արդէն ընթերցողը կտեսնէ թէ Բնչ ուղղակիան ողուով է ներշնչուած Գամալեանի «Գալօ Ափօն» և իրքան ժամանակակից ընթերցանութեան նիւթ է հայ ժողովրդի համար: «Ուաչանը» նիժեցի հայ ուստիացի արիասիրտ որսորդի տիպնէ ներկայացնում, որի «քաջութեան շնորհիւ շրջակայ աւազակարարոյ թուրքերը չեն համարձակուում մօտենալ հայ գիւղացիներին»:

Երկու պատկերներն էլ գրուած են հայաշունչ լեզուով և հետաքրքրութեամբ են կարդացուում:

2) Մեր էժանագին գրողարանը Մաթէօ Ֆալիօնէ, Մատնիչը, լրտես Ս. Պետերբուրգ 1905 էջ 62.

Գրքոյկիս մէջ ամփոփուած երեք փոքրիկ զրոյցներն էլ միենոյն տենդենցիան ունին. պատժել մատնիչին ու լրտեսին: Մատնութիւնն ու լրտեսութիւնը անբարոյական գողափարներ են, միշտ էլ դատապարտելի են եղել փոքր ի շատէ ինքնաճանաչ հասարակութեան մէջ և աւելի ևս զարդելի պէտքէ համարուին մեր հասարակական կեանքի այժմեան պայմաններում: Գովելի է ուրեմն գրքոյկի հրատարակիչ տիկին Ջաբելի հոգացողութիւնն այսպիսի ընտրութեան վերաբերմամբ: Ամեն կերպով պէտքէ աշխատել կոիւ մղել անբարոյականացնող գողափարներէ դէմ, որպէս չի ժողովրդի գիտակցութիւնն արթուն մնայ և այդպիսով ըստ արժանւոյն պատժուի, եթէ արմատախիլ անելը մեր ուժերից բարձր է: Սակայն եթէ կամենանք այդպիսի զգացմունքներ առաջացնել չափազանցացրած և անանընական օրինակներով, կարող ենք հակառակ նպատակի հասնել և բթացնել ընթերցողի զգացմունքները. այս տեսակէտից անհ գրքոյկիս մէջ պարունակուած երկու զրոյցները «Մաթէօ Ֆալիօնէն» ու «լրտեսը» անյաշող ենք համարում:

Ֆրանսիացի գրող Պրօսպէր Մէրիմէի «Մաթէօ Ֆալիօնէ» զրոյցի հերոս 50 տարեկան Մաթէօն հրացանով է սպանում է իւր միակ արու զաւակ տաս տարեկան Ֆօրտունատոյիս, որովհետև վերջինս գրաւուելով սպայի առաջարկած արծաթեայ ժամացոյցից՝ մատնում է վիրաւորուած փախստական Սանպիերոյիս նրա ձեռքը: Իրամամբ ընդգծեցինք տաս տարեկան բառերը, որովհետև այդ հասակի երեխան չի կարող լիովին ըմբռնել մատնութեան անբարոյականութիւնը և պատասխանատու համար-